891.995
Ն-93

ՆՈՐ ՏԱՐԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Նկարները՝
Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

891.995
G-93

2011-07

Ս. ՍՏԱԼՍԿԻ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Ձեզ յերգ ու վոգջույն Սուլեյմանից ձեր,
Ցերկիրն ե ծաղկում, ժիր յերեխաներ,
Ձեզ համար յերկրում նոր աշգ ե բացվել՝
Ձեր ջինջ աչքերի պես, յերեխաներ։

Հալածեք հեռու ծուլությունը վատ,
Ցերգով դիմեցեք ամեն մի որվան,
Վոր յեղնիկի պես, շողրն արևի վառ՝
Վազ տա դեպի ձեզ, ժիր յերեխաներ։

Ամեն ինչ ունեք, ինչպես բաց տետրակ,
Դուք պիտի շողաք ու թռչեք արագ.
Ծովը հմայիչ, աստղերն անքանակ՝
Պետք ե միշտ գերեն, ձեզ, յերեխաներ։

Անծայր ե. հարուստ լայն յերկիրը մեր,
Ունի անհուն խինդ ու անթիվ գրքեր.
Վորպեսզի հասներ, վայելեք դուք ել՝
Սովորեք անդուլ, ժիր յերեխաներ։

Մի ափից մյուս ափ՝ խնդա՛ի գարուն,
Ձեզ դաստիարակող, աճեցնող յերկրում.
Թող բարգավաճի յերկիրն հար ամուն,
Փայլ տա վոնց ալտազ, ժիր յերեխաներ։

ԹԱՐԳՄ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

12.07.2013

11791

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Կգա այցի այս գիշեր,
Պայծառատես պատանին,
Յեվ վողջ դռներն հոյաշեն՝
Նրա դիմաց կբացվեն։

Մտնում է ներս ժպտերես,
Բոլոր տեղեր նույն պահին.
Դեմքն առնական, զանգրագես,
Ստալինյան պատանին։

Բարևում է համարձակ,
Նա ժպտում է բոլորին.
Գեղագանգուր ծամն արձակ՝
Ծփում է լայն ճակատին։

Աչքերը հուր—սրատես,
Նայվածքը ջինջ ու փսեվ.—
Ստալինյան մոքի պես,
Խորաթափանց ու լուսե։

Փռում է նա լիությունն
Սեղաններին մեր բոլոր.
Ահա արդեն մտավ տուն
Հաղթանակի տարին նոր։

ՊԵՏ ԿՈՄ ԿՈՒՍ ԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արա ՍՍՌ
Ա. ԿՄ Ա ՄԱՍՀԱՌԱՊ
Ա. ՄՅՈՒՍ ԱՆՎԱՆ

60139-67

Հ. ՀԱՑՐԱԳԵՏՅԱՆ

ՄԵՐ ՏՈՆԱԾԱՌԸ

Զարդարվել ես դու պայծառ,
Մեր սիրելի տոնածառ,
Մենք կպարենք ու կերգենք,
Ձենք մոռանա քեզ յերբեք։

Այսքան ուրախ կյանքը մեր՝
Մեծ ՍՏԱԼԻՆՆ է տվել
Յեվ հայրական խնամքով
Մեզ փայփայել ամեն որ։

Դրա համար յեկեք մենք
Միշտ գերազանց սովորենք,
Լինենք խելոք. կարգապահ,
Յեվ չունենանք բացակա,

Վոր համբավը մեր լսի.
Մեծ ՍՏԱԼԻՆՆ ու ասի.
«Ապրեք, խելոք մանուկներ,
Այդ ինչ լավ եք սովորել»։

ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏՈՆԱԾԱՌԻ ՅԵՐԳԸ

Հազած կանաչ փշոտ գլխարկ,
Կանաչ շորեր շողշողուն,
Ցես մի ծառ եմ մեջքով բարակ,
Վրաս զարդեր պսպղուն։

Ցես մտել եմ մի մեծ սենյակ,
Վզիս զարդեր շարեշար,
Շուրջս վառբան լույս ու կրակ,
Մանկան ծիծաղ և շուրջպար։

Դե, շրջանը լայն բացեք,
Յերգեր ասեք, պարեցեք։

Իմ ուսերիս ինչ սիրունիկ
Խաղալիքներ կան պես-պես,
Փայլուն աստղեր, ձի ու ձկնիկ,
Ցեվ տիկնիկներ վարդերես։

Վոսկի ընկույզ, արծաթ նավեր,
Ցեվ կողովներ գունդզուն,
Իսկ ճյուղերիս տակ ծանրաբեռ,
Ձմեռ պապին ե ժպտում։

Դե, շրջանը լայն բացեք,
Ցերգեր ասեք, պարեցեք։

Դուրսը ձմեռ ու խորը ձյուն,
Սառնամանիք հաճելի։
Իմ շուրջ բոլոր խաղ, խնդություն,
Ցեվ մանուկներ սիրելի։

Զիլ հնչում են յերգ ու ծիծաղ,
Ամեն մանուկ՝ մի ծաղիկ,
Լավ ե ապրել, ապրել ուրախ,
Մեր մեծ յերկրում յերջանիկ։

Դե, շրջանը լայն բացեք,
Ցերգեր ասեք, պարեցեք։

ՎԵՍՊԵՐ

ՈՒՐԱԽ ՁՄԵՌ

Թիթեռների պես թեթև,
Օրորվելով շարունակ,
Ձյունն է իջնում լուսաթև՝
Ծածկում և՛ գյուղ, և՛ քաղաք։

Ծածկում ձորերն ու այգին,
Մերկ բլուրներն ու ճամբան,
Ու կանչում է ամենքին
Ձմեռ-պապին անվարան.

—Դուք, մանկիկներ իմ զվարթ,
Շորերն հագեք ձեր տաքուկ,
Եկեք շինենք մի մեծ մարդ՝
Ձնից փայլուն ու փափուկ։

Շարվենք նրա շուրջը մենք՝
Զիլ ծիծաղով ու ծափով,
Խնդանք, պարենք ու յերգենք
Եվ համարձակ, և՛ թափով...

Մեզ մոտ ձմեռն է ուրախ,
Մեր տները՝ շեն ու լիք,
Իսկ մենք՝ տոկուն և՛ խիզախ
Մանուկներ ենք յերջանիկ...

ՍԱՖՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎՈՂՋՈՒՅՆ ՆՈՐ ՏԱՐԻ

Հազար բարով քեզ նոր տարի,
Ծափ ու ծիծաղ մեր աշխարհի,
Դու մեզ բերիր ուժ ու յեռանդ
Խինդով լցրիր մեր դաշտ ու հանդ։

Մենք Լենինյան վոսկե դարի
Բյուր մանուկներ հոգով արի,
Վողջունում ենք քեզ բոցավառ,
Սփռում ճամբիդ վարդեր պայծառ։

Ու հրճվում ենք մեր ջինջ սրտով
Անվերջ պարում յերգ ու սիրով,
Ու ձրմեռը արծաթաշող
Մեզ գարուն ե թվում ծաղկող։

Քեզ այսպես ե միշտ յերգելու
Մեր սերունդը՝ հաղթ ու հուժկու,
Մեր սերունդը՝ վարդ ու մեխակ,
Մեծ արեվի շողերի տակ։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները։
— Սուս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված վողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ։

Կրգա գարնան արևն ել յեռ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կբտանի։

«Յելեք, կասի, իմ մանուկներ».
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կբհանեն գլխիկները,
Աչիկները կբբանան։

ՁԱՐՄԵՆ

ՏԵՐԳ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրում եմ ձեզ, մեր աշխարհի
Առույգ, աշխույժ մանուկներ,
Դուք նման եք ծաղկած ծառի,
Ունեք ժպտուն աչիկներ։

Դուք մեր կյանքի վառ պարտիզի
Սոխակներն եք ու վարդեր,
Մեր խնդության մեծ հանդեսի
Դրոշակներն ու զարդեր։

Ո՞վ է յերկնից մեր դյութական
Այսքան աստղեր թափել վար,
Դուք մեր հույսն եք, մեր ապագան,
Մեր լույսերը մշտավառ։

Դուք մեր վճիտ, քաղցրակարկաչ,
Զվարթաձայն առուներ,
Դուք մեր յերկրի մշտականաչ
Ու ծաղկաբեր գարուններ։

Կարկաչեցեք, ուրախացեք,
Ո՛վ ժառանգներ աննման,
Ձեզ չի դիպչի վոչ մի չար ձեռք
Մեր աշխարհում անսահման։

Թ. ԽԱՉՅԱՆ

Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Ստալինյան Նոր տարի,
Գալըդ պայծառ ու բարի,
Դու բերել ես մեզ համար
Ուրախ օրեր մեր դարի։

Դու բերել ես մեզ համար
Երջանկություն ու հրճվանք,—
Մեր սրտերում անհամար՝
Խնդություն է, ուրախ կյանք։

Մեր սրտերում անհամար
Կյանքի տոն է, հույզի ծով,
Հնչում է յերգը անմար՝
Իմաստության զնգոցով։

Թող միշտ ապրի Հայրը մեր,
Նրան գարուն ու արև,
Մեր սրտերից լուսաբեր՝
Հազար ողջույն ու բարև։

Մ. ԿՈՐՑՈՒՆ

ԽՆԴՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԾԱՌ

Հազար հույզով, հազար լույսով,
Հազար բերքով ես դու յեկել,
Ինչքան լավն ես, ինչքան պայծառ,
—Հեյ ջան, խնդության տոնածառ։

Ստալինը մեր հարազատ,
Պարգևեց մեզ նոր կյանք ազատ,
Կյանքն ուրախ է, կյանքը՝ պայծառ,
Հեյ ջան, խնդության տոնածառ։

Մեր ուրախ յերգն է զիլ հնչում,
Առվակի պես միշտ կարկաչում,
Ստալինյան արևով վառ,
Հեյ ջան, խնդության տոնածառ։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՀ Ազգային գրադարան
NL0401436

51
584
11791
2303

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

Կազմեց և խմբագրեց՝ Վ. Նազեր
Լիտոգրաֆիական աշխ՝ Նիկ. Մկրտչյանի
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

НОВЫЙ ГОД

Гиз Арм. ССР,
Ереван, 1939

Գլավլիտի լիազոր՝ Ա 4121 Հրատ. 4766.
Պատվեր 817. Տիրաժ 5000

Պետհրատի 1 տպարան, Երևան, Լենինի 65.

891.99Ս
Ս-93